ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների հաշվետվությունը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված՝ 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին:

2. «Անձի բազմակողմանի գնահատման՝ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգի իրականացման ընթացքի մասին:

3. Տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց որոշ հիմնախնդիրների մասին:

4. Այլ հարցեր:

Մասնակցեցին՝

Ա. Ասատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամներ՝

Ջ.Բաղդասարյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Ա. Օրբելյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Հ.Աբրահամյան Հայաստանի հաշմանդամների <<Ֆյունիկ>> միության նախագահ

Ս.Թադևոսյան <<Հույսի կամուրջ>> հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն>> հասարակական կազմակերպության նախագահ

Լ. Ներսիսյան <<Աստղիկ>> հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա>> հասարակական կազմակերպության նախագահ

Ս.Մաղաքյան <<Լիարժեք կյանք>> հասարակական կազմակերպության նախագահ

Գ.Գրիգորյան <<Հայաստանի խուլերի միավորում>> հասարակական կազմակերպության նախագահ

Ա.Կեսոյան ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին մասնակցել են՝

Ռ.Բալասանովա ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի սոցիալական պաշտպանության և առողջապահական բնագավառներում բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ (նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանի առաջարկով)

Գ.Մնացականյան ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (նախարարի առաջին տեղակալ Վ.Պողոսյանի առաջարկով)

Ա.Մուրադյան ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական և միջին կրթության բաժնի գլխավոր մասնագետ (նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանի առաջարկով)

Հ.Գալստյան ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության պետ (նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի առաջարկով)

Ֆ.Դանիելյան <<Հայաստանի կույրերի միավորում>> հասարակական կազմակերպության նախագահի տեղակալ (նախագահ Ա.Հակոբյանի առաջարկով)

Մ.Չալիկյան <<Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության<<ՈՒնիսոն>> հասարակական կազմակերպության հանրային կապերի ղեկավար (նախագահ Ա.Ալավերդյանի առաջարկով)

Ա.Դավթյան <<Հաշմանդամների <<Փարոս>> կրթության և մշակույթի զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպություն (նախագահ Ս.Օհանյանի առաջարկով)

Հրավիրվածներ՝

Երևանի քաղաքապետարան՝
Քաղաքապետի առաջին տեղակալ, մարզային հանձնաժողովի նախագահ՝
Կամո Արեյան

Շիրակի մարզ՝
Մարզպետի տեղակալ, մարզային հանձնաժողովի նախագահ՝ Հարություն Արշակյան

Արագածոտնի մարզ՝
Մարզպետի տեղակալ՝ Նունե Մովսիսյան

Արարատի մարզ՝
Մարզպետի տեղակալ, մարզային հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Մուրադյան
Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, մարզային հանձնաժողովի քարտուղար՝
Գեղամ Միրզոյան

Արմավիրի մարզ՝
Մարզպետի տեղակալ, մարզային հանձնաժողովի նախագահ՝ Լարիսա Մուրադյան

Գեղարքունիքի մարզ՝
Մարզպետի տեղակալ, մարզային հանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Հակոբյան

Սյունիքի մարզ՝
Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության բաժնի պետ, մարզային հանձնաժողովի քարտուղար՝ Արամ Շահնազարյան

Տավուշի մարզ՝
Մարզպետի տեղակալ՝ Լյովա Սարգսյան

Կոտայքի մարզ՝
Մարզպետի տեղակալ՝ Ղազարյան Ալբերտ
Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ,. մարզային հանձնաժողովի քարտուղար՝
Վանիկ Հունանյան

Լոռու մարզ՝
Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, մարզային հանձնաժողովի քարտուղար՝ Վալերի Ջաղինյան

Վայոց Ձորի մարզ՝
Մարզպետի տեղակալ, մարզային հանձնաժողովի նախագահ՝ Մելս Հարությունյան

Ա.Սիմոնյան	ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության պետի տեղակալ
Ա.Մանգասարյան	Զբաղվածության պետական ծառայության գործակալության պետ
Հ.Խաչատրյան	ՀՀ ԱՍՀ նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Ա.Մարտիրոսյան	Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցավ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը:

Ողջունելով հանձնաժողովի անդամներին և հրավիրված անձանց՝ նախարարը նշեց, որ նկատելի փոփոխություններ են կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի մեջ: Խնդիրը ոչ միայն այդ անձանց սոցիալական աջակցություն տրամադրելն է, այլ բոլոր ոլորտներում հավասար հնարավորություններ ապահովելը: Այս առումով նա նշեց, որ և Երևանում, և մարզերում մեծ աշխատանք է կատարվել, սակայն ունենք շատ անելիքներ:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների նախագահներն և ներկայացուցիչները, որոնք ներկայացրեցին Երևան քաղաքում և մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված 2013թ-ի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը հանգամանորեն ներկայացրեց քաղաքապետարանի կողմից իրականացրած բոլոր ծրագրերը, ընդգծելով, որ դրանք իրականացվել են պետական տարբեր գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով: Խոսելով սոցիալական աջակցության, ներառական կրթության, մշակույթի, սպորտի, իրավունքների պաշտպանության և այլ ոլորտներում կատարված աշխատանքների մասին, պարոն Արեյանն առանձնացրեց քաղաքաշինական միջավայրն ու տրանսպորտային միջոցները հարմարեցնելու ուղղությամբ արդեն իսկ արված և կատարվելիք քայլերը: Մասնավորապես՝ արդեն կա Երևանի քաղաքապետի որոշումը. հասարակական նշանակության բոլոր շինությունների նախագծման փուլում պարտադիր պայման է թեքահարթակների առկայությունը, շինությունները շահագործման կընդունվեն միայն հասարակական կազմակերպությունների դրական վիզաների առկայության դեպքում: Ինչ վերաբերում է հասարակական տրանսպորտին՝ 2014թ. 10 ավտոբուս կհարմարեցվի տեղաշարժման խնդիրներ ունեցող մարդկանց կարիքներին, քննարկվում է նաև հարմարեցված տաքսիների գաղափարը:

Պարոն Արեյանն առաջարկեց ազգային հանձնաժողովի անունից դիմել քաղաքաշինության նախարարությանը՝ շրջակա միջավայրի ունիվերսալ դիզայնի պարտադիր նորմեր նախատեսելու, եղած խնդիրներին օրենսդրական լուծումներ տալու համար:

Երևան քաղաքի հանձանժողովի նախագահի հաշվետվության վերաբերյալ արտահայտվեց հանձնաժողովի անդամ Լ.Ներսիսյանը.

Նա նշեց, որ բացի թեքահարթակների կառուցումից անհրաժեշտ է նաև հարմարեցնել սանհանգույցները և խնդրեց պարոն Կ.Արեյանին հնարավորության սահմաններում հետևողական լինել այդ հարցում:

Լ.Ներսիսյանի հաջորդ դիտարկումը կապված էր Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցմանը, որին ի պատասխան Կ.Արեյանը պատասխանեց, որ այդ հարցի լուծումը տեսնում է վերելակների տեղադրման մեջ, որը սակայն շատ ծախսատար է

և դեռևս հնարավորություն չկա այն կատարելու: Հետագայում հարցը կուսումնասիրվի:

Արտահայտվեց նաև Ս.Մաղաքյանը, ով դիտարկում արեց հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտի հարմարեցման հետ կապված՝ նշելով, որ քաղաքում գործում է հատուկ տաքսի ծառայություն և արդյո՞ք հնարավոր է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել զեղչի կտրոններ այդ տաքսիներից օգտվելու նպատակով: Պարոն Կ. Արեյանը առաջարկեց հանդիպել և քննարկել այս հարցը բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Արտահայտվեց Ս.Թադևոսյանը, ով նշեց որ Երևան քաղաքում տեսանելի են հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենաների համար նախատեսված ավտոկանգառները և առաջարկ հնչեց այն ավելի լայն դարձնել, որպեսզի հաշմանդամները կարողանան մեքենայից իջնելիս սայլակների վրա անվտանգ նստել: Պարոն Կ.Արեյանը պատասխանեց, որ առաջարկը ընդունելի է և պատրաստ է քննարկելու այս հարցը շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Ա.Օրբելյանը առաջարկություն ներկայացրեց, որ տեսողական նշանները պետք է ներկված լինեն վառ գույներով տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար:

Մարզային հանձնաժողովների նախագահները ևս ներկայացրեցին կատարված աշխատանքները, խնդիրները: Պետք է նշել, որ խնդիրները, չնչին տարբերություններով, միատեսակ են համարյա բոլոր մարզերում: Բոլոր զեկուցողները նշեցին հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի դրական փոփոխության, հասարակական կազմակերպությունների աճող ակտիվության, խնդիրները համատեղ լուծելու անհրաժեշտության մասին:

Քննարկումների ժամանակ նշվեց նաև, որ հաշմանդամների զբաղվածության ապահովվման ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ:

Շիրակի մարզի հանձնաժողովի նախագահը նշեց, որ Շիրակի մարզում գործում է կարի արտադրամաս, որտեղ աշխատում են հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր կարում են անկողնային պարագաներ, սակայն կա արտադրանքի սպառման խնդիր: Պարոն Ա.Ասատրյանը այս հարցի վերաբերյալ նշեց, որ կարող են ներկայացնել առաջարկություն, որը ևս կքննարկվի ազգային հանձնաժողովի նիստում:

Հաշվետվությունների ներկայացման ժամանակ պարզ դարձավ, որ Արագածոտնի և Կոտայքի մարզերի դպրոցներում չի իրականացվում ներառական կրթությունը, իսկ Արարատի մարզում անհրաժեշտ է ավելացնել այդպիսի դպրոցների թիվը՝ Խարբերդում բնակվող հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար կատարելով լրացուցիչ կարիքների գնահատում:

Այս հարցի վերաբերյալ արտահայտվեց ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ Ա.Մուրադյանը, առաջարկելով մարզպետարանին, մարզում կատարել ուսումնասիրություն և իրականացնել դպրոցների կարիքների գնահատում և համապատասխան առաջարկություն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Պարոն Ա.Ասատրյանը հանձնարարեց Արարատի մարզային հանձնաժողովին կատարելու վերը նշված կարիքների գնահատումը և նշել, թե որ դպրոցները կարիք ունեն ընդգրկվել ներառական կրթություն ապահովող դպրոցների շարքում:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության ոլորտում խնդիրների մասին իր դիտարկումն ունեցավ Հայաստանի խուլերի միավորման ներկայացուցիչը, ով նշեց, որ ուսումնական հաստատություններում սովորելու համար

առաջացել են խնդիրներ հիմնականում դասընթացների ժամանակ բացակայում է սուրդոթարգմանությունը, որն էլ թույլ չի տալիս լսողական խնդիրներ ունեցող հաշմանդամներին ստանալ լիարժեք կրթություն:

Հանձնաժողովի անդամ Ս.Թադևոսյանը նշեց, որ այսօր կա մանկական հատուկ քայլակների խնդիր և պետք է նաև այդ ոլորտում կատարվի հետազոտություն և պարզաբանվի, թե որքան է պահանջարկը: Պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ անհրաժշետ է այդ քայլակների կարիքի վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել հանձնաժողի քննարկմանը:

Հանձնաժողովի անդամների կողմից բարձրացվեց նաև եկեղեցիների թեքահարթակներով հարմարեցման հարցը: Որոշում կայացվեց հանձնաժողովի կողմից գրությամբ դիմել Հայ Առաքելական եկեղեցուն, կառուցվող եկեղեցիներում հաշմանդամություն ունեցող անձանց անարգել տեղաշարժվելու համար մատչելի միջավայր ստեղծելու առաջարկով:

Հանձնաժողովի անդամ Լ.Ներսիսյանը կատարեց ևս մեկ դիտարկում անգործունակ ճանաչված հաշմանդամների խնամակալների ինստիտուտի հանդեպ որոշակի վերահսկողություն սահմանելու վերաբերյալ և նշեց, որ այս ոլորտի իրավասու պետական մարմինները չպետք է կորցնեն կապը խնամակալ նշանակված անձի հետ: Նախարարը նշեց, որ այս հարցը անհրաժեշտ է քննարկել և հարցի լուծումը տեսնում է ինտեգրված սոցիալական ծառայությունների ներգրավման մեջ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց հաշմանդմաների և տարեցների հիմնահարցերի վարչության գլխավոր մասնագետ Ա.Հակոբյանը: Հակիրճ ներկայացվեց «Անձի բազմակողմանի գնահատման՝ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգի իրականացման ընթացքը:

Ա. Հակոբյանը առաջարկեց մարզային հանձնաժողովի անդամներին, որպեսզի իրենց մարզերում կատարեն պետական և ոչ պետական մարմինների կողմից իրականացվող ծառայությունների քարտեզագրում՝ ըստ ոլորտների և տեղեկատվություն ներկայացնեն նախարարություն:

Օրակարգի երրորդ հարցի մասին զեկուցեց հաշմանդմաների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյանը, ով ներկայացրեց «Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական» գրադարան ՀՈԱԿ-ի և ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի մասին: Ծրագիրը ներկայացնելուց հետո պարոն Ա. Կեսոյանը նշեց, որ սույն ծրագրի արդյունավետությունը կախված է դրա մասին իրազեկության աստիճանից և ներկա գտնվողներին խնդրեց ծրագրի մասին հայտնել բոլոր շահագրգիռ կողմերին:

Պարոն Ա.Կեսոյանը զեկուցեց նաև Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրող տրանսպորտային միջոցներին անվճար կայանատեղի հատկացնելու խնդրի վերաբերյալ և նշեց, որ իրավասու մարմինների հետ քննարկումներից հետո անհրաժեշտություն է առաջացել մշակել «Հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցի «Հաշմանդամ» ճանաչման նշան տրամադրելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որտեղ ներառված կլինեն այն բոլոր փաստաթղթերը, որոնց

հիման վրա ճանապարհային ոստիկանությունը կտրամադրի «Հաշմանդամ» ճանաչման նշանը:

Չորրորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Ս.Թադևոսյանը, ով նշեց որ անհրաժեշտություն է առաջացել «Արև» համակարգի շահառուների ցանկում ներառել նաև մանկական ուղեղային կաթված (ՄՈՒԿ) ունեցող երեխաների, ովքեր գլխի գերշարժունակության խնդիր ունենալու պատճառով չեն կարողանում կենտրոնացնել հայացքը համակարգչին: Նախարարը առաջարկեց Ս.Թադևոսյանին մշակել ծրագիր և ներկայացնել նախարարության համապատասխան ստորաբաժանում:

Ամփոփելով օրակարգում ներկայացված հարցերը, ազգային հանձնաժողովի նախագահը որոշեց Երևան /քաղաքի/ հանձանժողովի նախագահի և մարզային հանձնաժողովների նախագահների կողմից ներկայացրած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված՝ 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվություններն՝ ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի նախագահի կողմից հանձնարարվեց ներկայացնել առաջարկություններ և մշակել ծրագրեր նիստի ընթացքում բարձացված հարցերի վերաբերյալ:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ԿԵՍՈՅԱՆ**